

զձեղ զամենեսեանդ որք հանդիպիք սմա կարտալով կամ օրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր՝ զփցուն գրչակս եւ զծնօղն իմ զփոխեցեալսն առ քրիստոս. զհայրն իմ վլթունն՝ եւ զմայրն իմ զլննան, եւ զդրիգոր որդեակն իմ՝ որ ետ յօգնութիւն գրոյ՝ ութ զահեկան կարմիր. եւ եղաք զսա յիշատակ սկզբցոյս, որ անուամբ սուրբ Աստուածածնին կառուցեալ է՝ ի քաղաքս Զամօցա: Եւ այլ չունի ոք իշխանութիւն առնուլ զսա աստի կամ յայլ եկեղեցի տալ կամ վաճառել...: Դարձեալ աղաչեմ զձեզ ով ընթերցող եղաք իմ, անմեղագիր լերուք խոշորութեան եւ սղալանց եւ անյարմարութեան գրոյս, եւն:

Է. “Ուղրմի քրիստոս Աստուած ստացողի սուրբ գրոցս Յակոբ քահանային եւ հօրն եւ մօրն Աննային եւ. (Եաղուդ Հմմա. թղ. 29 ա, 55 ա եւն) Երիցինովն, եւ որդոցն Գրիգորին եւ Ստեփանոսին, Յովհաննէսին եւ Աստուածատուրին եւ դստերացն Աննային եւ Մարիամին եւ Շուշանին: — Այսպիսի յիշատակագրութիւն կը կրկնուի ամէն հատածէն վերջ:

Տաշեան՝ անդ, էջ 26—27 (թ. 17 Յայսմաւութք): Կոյնն՝ կամենից, էջ 172—173):
5. «Փառք... որ ետ կարողութիւն տիկարութեան ծերացեալ եւ փտեալ մարմոյս յանդ ելանել սուրբ գրոյս որ կոչի Մաշթոց. Արդ գրեցաւ սա ձեռամբ յօգնամեղ Յակոբ իրիցուս ի յերկիրս իլախաց ի քաղաքս Զամօցաւ, առ դուռն սուրբ Աստուածածնին. ի թագարերութեանս Հայոց Ռ. 2. ամի ի ժամանակս թագաւորութեանս Խախաց չորրորդ Վլատիսլավին եւ Հայրապետութեանս սուրբ էջմիածնա Տեառն Տէր Փիլիպպոս Կաթուղիկոսին. Փետրվարի ամսոյ ի իե. յանդ ելաւ ի վայելումն անդրանիկ որդոյ իմոյ Տէր Պետրոս Քահանային. զըր արտասուաթոր մաղթանօք հայել յԱստուծոյ ամենակալէ, զի բարով վայել տացէ.... Արդ՝ երեսանկեալ աղաչեմ զձեզ եղայրը, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, ասացէք աստուած ողորմի մեղաւոր Յակոբ իրիցուն եւ որդոյ նորին Տէր Պետրոս քահանային: ... Յայսմ ամի մեռաւ մէծ իշխանն տէր քաղաքիս բան թումաս զայսիքին, այս հանճարեղ...»:
Տաշեան՝ անդ, էջ 13 (թ. 7 Մաշտոց):
(Հայուն կամենից, էջ 187:

Հ. Ս. Ակիննևս

ՊԱՐՍԿԱՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

ԵՇԻԼ ԲԱԼԵՐ-ՇԱԼԻ

Կեանըը: Զօւղահայ աշուղներից ամենահինը եւ ամենաշանաւորը Բաղեր-օղլին է: Խսկական անունն է Բաղրամ: Հակառակ մերցանկութեան, այս երգչի մասին էլ մի կենսագրական տեղեկութիւն չկարողացանք գտնել, միայն այսպանը յայտնի է, որ նա ծնուել է Նործուղայում եւ մանկութիւնից աշուղութեան սէր սւնենալով՝ աշակերտել է Նործուղայութեան սէր սւնենալով Համար գնացել է Մուշ-Ա. Կարապետութիւնի եւ այնուհետեւ ձեռք առնլով զօնդուըլ, երգեր եւ եղանակներ է հեղինակել եւ իրեն նուիրել աշուղութեան:

Նա իր ժամանակակիցներից մեծ յարգանք է վայելել:

Թողել է բաղմաթիւ բարոյական, խրատական, սիրային եւ այլ երգեր, որոնցից սակայն շատերը, դժբախտաբար, կորել են. մեր ձեռքը հասել են հազիւ 8—10 կտորներ, որոնք ցոյց են տալիս, որ նա ունեցել է քերթողական շնորհք եւ սրանց ներքին բովանդակութիւնից կարելի է գաղափար կազմել երգչի հայեացք-ների եւ մտորումների մասին:

Այդ երգերից առանձնապէս նշանաւոր են երկու տաղերը, մինը՝ «Խաղ վասն հարստահարութեան նալեր-Շահի», իսկ միւսը՝ «Խաղ վասն նեղութեան Զուղայու», որոնց մէջ երգիչը նկարագրում է ժղ. գարի Ձուղահայ ժեպովդի դառն կեանքը: Բռնակալ նադեր-Շահի ձեռքից նրանց քաշած անլուր ցաւերն ու տառապանքները, անասելի հարստահարութիւններն ու բռնութիւնները, որոնց մէջ ինքնապել է, նիւթ է շինում: Ասենք ուրեմն մի քանի խօսք նախ այդ դարեցըցանի քաղաքական անցքերի մասին:

Բաղերն ապրում էր ժլ. դարում, այնպիսի մի ժամանակ, երբ Պարսկա-Օսմանեան եւ Աղուանական կոիւները Պարսից երկրում անպակաս էին եւ որոնց հետեւանքով Պարսկաստանոր եր մի զօրեղ ձեռք, մի աննկուն ոգի, որ վերականգնելու ընկած Պարսկաստանը: Եւ ահա ասպարեզ է գալիս Պարսից պատմութեան մէջ մի նոր զօրագլուխ, որ շնորհիւ իր ուղմական ընդունակութիւնների եւ քաղաքական հեռաւտեսութեան կարողանում է Պարսկաստանի քաղաքական դրութիւնը բարեփոխել, գա

Թահմաղ՝ Ղուլի խանն է, որ սկզբում հասարակ մի աւազակապետ էր եւ ասպատակութիւններ էր գործում Խորասանի անապատներում, բայց յետոյ ծառայութեան է մանում Շահ-Թահմաղի մօտ եւ կարճ ժամանակամիջոցում զօրապետ եւ ապա ընդհանուր սպարապետ է դառնում, վերջը Շահ-Թահմաղին սպանել է տալիս եւ նրա վեցամսեայ Արաս որդու մահից յետոյ, 1836 թուին, Մուղանի դաշտում աւագանիների մի ժողով գումարելով՝ իրեն Շահ է ընտրել տալիս եւ կոչուում է Նադէր-Շահ։

Նադէր՝ Նախ մաքրում է Պարսկաստանն Ազուաններից եւ միանգամայն յաղթում է եւ ձնշում օսմանցիների ոյժը. ապա Սպահանից գնում է Ղանդաხար եւ այստեղից էլ յարձակում է Հնդիկների վրայ, տիրում Հնդկաստանի մի մասին եւ մեծամեծ գումարներով, 1739 թուին, վերադառնում է Պարսկաստան, որից յետոյ 1746 թուին, իր սուրը նորից դարձնում է օսմանցիների դէմ եւ բոլորովին յետ է մղում նրանց, որով Հայաստանի արեւելեան մասը, մինչեւ Երեւան ու Նախշեւանը նորից անցնում է պարսիկների ձեռքբ.

Սակայն Հայերը, Նա մանաւանդ Զուղահայերը, մեծապէս տուժում են Նադէր-Շահի թագաւորութիւնից: Նա ընչափացութիւնից կուրացած, աշխատում է պետական եւ զինուորական ծախսերը ձեռք բերել Հարուստ Զուղահայերից. այդ նպատակով Նա շարունակ Հաւածում եւ ծանր հարկերով Ճնշում է ժողովրին, պահանջելով նրանցից իւրաքանչիւր տարի 10.000 թուման կանիկ փող, որը հաւաքելու գործը յանձնում է իր զինուորաներին, որոնք մտնելով Հայերի սներից ներս, անասելի բռնութիւններ են գործ դնում եւ ամէն կողմ ահ ու սարսափ տարածում: Նադէրը այդպիսի ծրագրով, 1739—1747 թուականը տանում է Հայերից 45.000 թուման փող: Բացի այդ՝ ջուղայեցի Հարուստ վաճառականներից պահանջում է Նա 60.500 թուման փող եւ այդ ծրագիրը յանձնում է իւրագործելու իր աթոռապետ Մահմուդ Ռզա-բէկին. սա եւս Նադէրի նման բռնակալ եւ գաֆան մի մարդ էր. գալիս է Նոր-Զուղա եւ Հասարակ ժողովրին անասելի Հարստահարութիւնների նեթարկելուց յետոյ, հայ իշխաններին խարէութեամբ հրաւիրում է իր մօտ, բանտարկում եւ իրբեւ փրկանք մեծագումար ուկի եւ արծաթ է պահանջում: Փախչող իշխանների կանանց կապում է եւ հրապարակում, խարսկի վրայ,

ստինքները այրում եւ նրանց որդիներին էլ խոշտանգում է, որպէս զի իրենց ամուսինների թագցրած փողերի տեղերը ցոյց տան: Իսկ փախչող իշխաններից շատերին գտնելով՝ ձեռքերի եւ ոտների եղունգների մէջ սրածայր եղէգներ է մլսում եւ յարդի ծխով շնչասպան անում: Ահա այսպիսի տանջանքներով դաժան Մահմուդ Ռզա-բէկը մի ամսուայ ընթացքում առնում է հայ իշխաններից 23.500 թուման կանխիկ փող:

Այս հարստահարութիւնների հետեւանքն այն է լինում, որ ժողովուրդը քայքայուում է անտեսապէս եւ մի զարհուրելի սովով է ընկնում Նոր-Զուղայում, որի հետեւանքով շատերը թողնում են Նոր-Զուղան եւ գաղթում դէպի Ռուսաստան, Հնդկաստան եւ այլ վայրեր։

Սակայն Նադէր-Շահի թագաւորութիւնը երկար չի տեւում. Մահմատ Սալահբէկը եւ 4 զինուորական պաշտօնեաներ դաւագրութիւն են կազմում նրա կեանքի դէմ. Նրանք գիշերով մտնում են թագաւորի վրանը եւ Նադէրի գլուխը կտրում են:

Երգերը: Ահա ժամանակակից յուղին այդ դէպերի պատկերն է, որ տալիս է մեղ Բաշէր-Օղլին իր երկու ոտանաւորներով, որոնց մասին գաղափար տալու համար, առաջ ենք բերում այստեղ մի քանի նմոյշներ:

“Աստուած դու մեղ մի ճար արա,
Շահը թամամ աշխարհ ա ուզում.
Երկիր քանդում վարայ վարայ,
Ողջ զլար, զլար ա ուզում:”

Այսպէս երգիչը դիմում է Աստծուն եւ մի ճար, ինդրում, բռնակալ Նադէր-Շահի ազատուելու համար, որը ցանկանում է տիրել ամբողջ աշխարհին եւ այդ նպատակով “վարայ” վարայ երկիր է քանդում ու՝

“Ասունավարին քարքանդ անում,
Արզ անողին սպանում.
Ամեն զեղից մի զուլ տանում
Կամ՝ մի հօքար ա ուզում:

Գեալանթարներն բերում ա,
Թոռ ու չոր մի տեղ երում ա:”

Այս տեսակ անտանելի բռնութիւնների եւ հարստահարութիւնների հետեւանքով՝ երկրում ընկնում է անասելի թանգութիւն եւ ժողովուրդն այլեւս “սուլուկ” է ուտում, որով մեռնում են շատերը, բայց ոչ տէրտէր կայ, ոչ էլ “մուղտսի” որ թաղէ մեռելներին, բո-

լրն էլ փախել են եւ թագնուել, իսկ մեռել-ներին չներն են ուտում:

“Սուլուկ կերանք, ընդուր մեր շունչ պարզէց, Հատ մարդ մեռաւ՝ շունն կերաւ, չժաղվէց. Տէրտէրանին փախան՝ մուղղսին դաղվէց. Դառ կանչէց, Գաբրիէլ, Մուքէլ հրեշտակն:”

Այնուհետեւ երգիչը պատմում է Նաղեր-Շահի սպանութիւնը եւ նկարագրում ջուղայի Դրութիւնը:

“Նաղը շահին սպանեցին
Ասացինք վերացաւ աշխարհքի չարըն.
Նոր Ադէլ շահ անուանեցին,
Ասացին դնջլէց էս աշխարհն:
“Շունչ ու մաֆարն մեղնից վերացաւ,
Ով շաղկամ բերեց, փող բացաւ.
Խացն ութը սպասի դառցաւ
— Բիստի դաղարըն:”

Դրատական-Բարոյական: Բացի սրա-նից՝ Բաղեր-օղին թողել է նաեւ մի քանի հատ էլ խրատական-բարոյական երգեր. դրանցով երգիչը իբրեւ բարի ծերունի եւ իբրեւ ճշմա-րիս հաւատացեալ-քրիստոնեայ՝ խրատում է Ադամորդուն իր Ստեղծողին միտ բերել եւ միշտ դիշեր ցերեկ ծնրադիր փառք տալ եւ “Հայր մեղայ, Տէր ողորմեա, Տէր յիշեա՞ն ասե-լով՝ ժամ գնալ եւ աղօթել, որպէս զի Տէրն ամէն ժամանակ պահապան լինի:

“Ադամայ որդի, քո Ստեղծողին միտդ բեր,
Գիշեր-ցերեկ փառքն տուր համիշայ.
Փառք տուր Աստծուն, ասա՝ Հայր մեղայ,
Չոքիր ասա՝ Տէր ողորմեա, Տէր յիշեա:”
Որ ամենայն ժամանակ քեզ քօմակ ելի կուռ:”

Ապա յորդորում է երգիչը “Եյս հաւա-նից, յետ չի դառնալ. ով որ սրբութեամբ կը պահի իր հաւատն, ասում է նա,

“Մէր Տէրն նրա խէտ խաշտ ու բարիշ աղ, իսկ
Ում խտուրն որ խաշտ ա, ճրագն վառ ա,
Դորձքն բարի ա, անարատ գառ ա:”

Այնուհետեւ երգիչը, ծերութեան օրե-րում աշխարհիս ունայնութիւնն ու մահը միտ բերելով՝ ջերմեանդութեան է դիմում եւ ինքն իրեն խրատում:

“Եկ իմ անդադար սիրու՝ քեզի տամ օգուտ,
Գիշեր, ցերեկ քո փառքն տուր համիշայ.
Փառք տուր Աստծուն, առ ողորմութիւնն,
Դրիստ պահիր քո շարթ եղբար լուսնին:”

Երգիչն իրենով ուրիշներին խրատելու նպատակով, իր սեպհական իմաստութիւնից եւ փորձառութիւնից առաջ է բերում բազմա-թիւ խրատական մաքեր եւ դատողութիւններ, այսպէս՝

“Զօռաթն նամարդին չի՝ տղամարդինն ա,
Չունքի ինքն իւր եղբար ու շարթին ա.
Իմանողի փշտին խափաթն մին ա,
Չը ծակես դանակով, շը տաս քաղաթով:

Կամ՝

Առանց համբերութեան դու բան մի առիւ,
Օտար ձեռքով քո ճրագն մի վառիւ.
Կուլքիսայ մարդի հետ սօվդայ մի առիւ,
Երեւ քաղցած մնաս օրով, շաբաթով:

Բարոյական այս խրատներից յետոյ, եր-դիչը ինդրում է իր սիրելիներից, որ իրենց ականջումը պահին իր խրատները եւ զգոյշ կենան կեանքում:

Սիրային: Բաղերի միւս երգերը սիրային են եւ արեւելեան գովասնութիւններով լի այդ երգերից մէկի մէջ երգիչը վառ գոյներով գրուատում է եարի գեղեցկութիւնը եւ հե-թանոսական պաշտամունքով փառաբանում նրա գեղն ու հրապարը: Նրա եարն ունի սիրուն երես, որ աշխարհիս շնորհքն է, “արեգական”, աշքեր, որոնցից լուսինն է սասանում, սիրուն ծամ, որ հանում է ճանապարհից թէ թուրքի եւ թէ հայի, գեղեցիկ յօնքեր, որոնք երգչի թիվը տանում են գլխեց, վերջապէս վարդա-խելքը տանում են գլխեց, վերջապէս վարդա-խելքը տանում են գլխեց, վերջապէս վարդա-խելքը տանում են գիւղջստանում: Թիֆլիսում եւ գիւղջստանում:

Անըդ արեկական, լուսնի սաղանի,
Լուսնակի շատիղդ տեսնի, փաս առի.
Հողեղինում չկայ, որ քեզ խասանի,
Հրեղէն ես ամեն քեզ էր իր Աստուած:
Մօսկով ու Մարգար, Շամա եւ կամ Հալար,
Թիֆլիս, Գիւղջստան թէյ չունիս մաթլար.
Քրուունքդ անմահական ջուր ասեմ գուլսբ,
Գրախատի զօրն ամէն քեզ էր իտ Աստուած:

Գեղեցիկ եարին սիրում է երգիչը ջերմ,
անսահման սիրով եւ այդ սիրով խելայել՝ նրա
սիրուն այլ եւս ոչ մի տեղ հանգիստ չունի,
եարի սէրը նրա մէջ յարուցանում է զանազան
եարի եւ զգացումներ. նա փափառում է
ձեռքը դրած եարի պարանոցի վրայ, գետափը
զնալ թամաշայիս:

“Էն օրն ինչ կելնեք քեզ տեսնեմ բարով, իմ սիրտն ու քո սիրտն մին շառթ է դրաբով, Դաս բէ գարդան անենք, գուղայ քնարով, Թամաշայ երթանք գետափն, ինչ կելնի:”

Եւ դրանից աւելի մեծ երջանկութիւն չկայ երգչի համար: Սակայն եարը անտարբեր է մնում եւ երգչին թողնում է օտարի “շարում”, գարբէդար: Սիրակորոյս երգիչը համակուած անհուն թախիծով՝ գիշեր եւ ցերեկ տանջուում, մորմոքուում է սիրոյ կրակից: բայց վերջը նա անմեղ գանդատաներով դիմում է եարին, պատմում իր ցաւը եւ խնդրում, որ իրեն “խօշհալու” անի:

“Է՛տ ինչ խասիաթ ա իմ սիրելի եար, Թող մէկ օր խօշհալ անես, ինչ կելնի. Զուր յիփ դարբէդար անես դարդմանդ, Դուռ գոս քո մօր կշտիցն, ինչ կելնի:”

Այսուհետեւ անցնում է 6 օր, բայց եարը դարձեալ չի գալիս: Երգիչն այլեւս չի կարողանում դիմանալ եւ խելայել ման է գալիս, որ սիրականին գտնի ու իմանայ նրա մտադրութիւնը:

“Գտանեմ սիրտն յիմանամ, Զօռոց տամ, գօֆթարն տեսնեմ. Զօռոց, գօֆթարն շատացէլ ա, Աօր վեց օր ա գնացէլ ա:”

Ապա երգիչը “Փալու” է բանալ տալիս, որ իմանայ եարի “տօմարը”:

“Բաղէր-օղլուս արած եսիր, Խելքս տարաւ էն բիփիրն. Զուլում ինչ էր իմ թախիրն Փալ բանամ, իմ տօմարն տեսնեմ:”

Աերջ ի վերջը երգիչը գնում է եարին տեսնելու. Նրա սենեակն ամբողջ “մէջլիս,,էր, իսկ “թազն,, ոսկէթուփ: Եարը երգչի ձեռքից բռնելով՝ գնում է ծաղիկներով եւ վարդերով զարդարուած գեղեցիկ այգին:

“Զեռս բռնէց մտաւ իդեն Գիւլ գիւլթան բաղն թամամ, Գիւլ գիւլթան բաղում ծաղիկ էր, Անում էր գութսաղն թամամ:”

Այսպիսով երգիչը հասնում է իր նպատակին:

Ահա մեծ մասամբ այն ամէնը, ինչ որ հասել է մեղ երգչի քնարից:

Լիզուն: Երգերը գրուած են ջուղայի բարբառով, որոնց մէջ սակայն գործածուած են բաղմաթիւ թուրքերէն, պարսկերէն բառեր եւ

արտայայտութիւններ: Դրանցից հետեւում է որ Բաղէրն ծանօթ է եղել թուրքերէն եւ պարսկերէն լեզուներին:

Հնդիանուր հայեացք: Բաղէրն մատուրապէս մարձր կանգնած լինելով իրեն ըրջապատող հասարակութիւնից, իր երգերով զօրել ազգեցութիւն է ունեցել իր ժամանակակիցների հոգեկան աշխարհի վրայ եւ մեծ յարգանքու ու պատիւ է ձեռք բերել:

Նրա երգերից մի քանիսն ընդգրկում են ԺԱ. գարի ջուղահայ ժողովրդի կեանքը, որոնց երգիչն եղել է ականատես եւ հարազատութեամբ նկարագրում է մեղ գարեցրանի անցքերը եւ որոնց ուսումնասիրութեամբ հնարաւոր է գաղափար կազմել ջուղահայ ժողովրդի անցքեալ կեանքի ու պատմութեան մասին, եւ դրանով էլ բնորոշուում է երգչի նշանակութիւնը: Ճիշտ է, որ Բաղէրն իր երգերի մօտիւով եւ կառուցուածքով շատ ցած է թէ Յարթունու օղուց եւ թէ Ամիր-օղուց, բայց եւ այնպէս նաև իր աշխարհայեցողութիւններով եւ մտօրում ներով ունի իր համեստ տեղը մեր աշուղականութեան մէջ:

Նոր-ձուռդա:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԼ:



ԵՒԵՐԵԱՑ ԵՐԵՎԵՑԻ ՀԱՅ ԴԱՍԿԱՅՈՒԹԻՒՆ ՄՆՅՈՒՐԻՆԵՐԸ

ԲՆԵԳԻՐՆԵՐ ԵՒ ԶԵՐԵԳՐԵԿԱԿՅ
ՀԵՄԵՄԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Տիկ ՀԱ. 1921, էջ 129:)

Սլբոյն Եւսեբի թարգմանութիւն վասն Սլբոյն Ստեփանոսի առաջին վկային:

Զյաղթաւուղ փառաւորել ի ձեռն սասամի պատերազմի առաջին վկային յետ Փրկչին մերը, որ է Ստեփանոս, զայն որ իբրեւ տէրն մեր ընդամէ հաւը իւրոց նստէր՝ յարեաւ պասկել զնաշատակին: Սա որ կայր ի միջոցի, սա որ ընդ աղջութեան ատելի արդարութեան մարտնչել պատգամովք իւրովլք եւ սպառնութիւն աւելի յանդիմանութեամբ իւրով առ նոսա ծնուցանելի ի նոցանէն ի վերայ իւր. իբրեւ նորա ընդ տեսիլի նորա զարմանային եւ գառնանային, նա ի շերեւ-

— 1 Զեռ. թղ. 25ր—29ր: — 2 Ըստեփանոսի դուրս է ձգուած գաղափար օրինակին մէջ: — 5 Ըստեփանոս: — 10 Զ. ծանուցանէր: — 11 Գ. որ ծ. Զ., 15: